ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 269-Ա «20» հուլիսի 2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 13-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

20.07.2023

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թ. հուլիսի 20 -ի 269-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատանքների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐՅԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բարձրագույն կրթություն, առանց աշխատանքային ստաժի, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին (գերազանց):

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

ա) մասնակցել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքներին և ներկայացնել անմիջական ղեկավարին.

բ) մասնակցել քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրությանը և համապատասխան ընթացքի ապահովմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

գ) օժանդակել ՀՀ Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզ) համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգմանը ընտրանքային կարգով և հաշվառմանը, ներկայացնել անմիջական ղեկավարին.

դ) մասնակցել Մարզում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վերահսկմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

ե) օժանդակել Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին և ներկայացնել անմիջական ղեկավարին.

զ) մասնակցել մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների, առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

է) մասնակցել նախարարություններից, Մարզի համայնքների ղեկավարներից և այլ հաստատություններից ստացված առաջարկությունների քննարկմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

ը) մասնակցել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, գրությունների նախապատրաստմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին:

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. **Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ**

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

6. **Աշխատանքի գնահատման չափանիշներ**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշերը սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 1-ին կետի՝ «ա»-«ը»-ը ենթակետերով սահմանված արդյունքների: Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշերն են՝

ա) Մասնակցությունը վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքներին պատշաճ կատարված է.

բ) Մասնակցությունը քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրությանը և համապատասխան ընթացքի ապահովմանը պատշաճ կատարված է.

գ) Մարզի համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգմանը ընտրանքային կարգով և հաշվառմանը օժանդակելու աշխատանքները պատշաճ կատարված են.

դ) Մասնակցությունը Մարզում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վերահսկմանը պատշաճ կատարված է.

ե) Մասնակցությունը Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին պատշաճ կատարված է.

զ) Մասնակցությունը մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների, առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրմանը պատշաճ կատարված է.

է) Մասնակցությունը նախարարություններից, Մարզի համայնքների ղեկավարներից և այլ հաստատություններից ստացված առաջարկությունների քննարկմանը պատշաճ կատարված է.

ը) Մասնակցությունն առաջարկություններին, տեղեկանքներին, հաշվետվություններին, զեկուցագրերին, գրություններին նախապատրաստմանը պատշաճ կատարված է:

20.07.2023

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ